## 17. ՕԽԵՇ

Մեկ բազրկան-բաշի մը կէղնի. էդ բազրկան-բաշուն իրեք ախչիկ կէղնի, էտի կբառնա զուր բազրկան օր էրթա բազրկնուտենի։

Ախչկներ կթափին բոլոր, կըսին.— Ափո, մդի մեկ մեկ փեշքեշ բիր։

Ջոջ ախչիկ կըսե.— Ընծի Շամա խուրթնի բի։

Միջնեկ աղջիկ կըսե.— Ընծի Հալպու խուրթնի բի։

Պզտիկ լէ կըսե.— Ափո, ընծի օխեշ բի։

Բազրկան-բաշին է, գելնա կէրթա զուր մալ խրիտ կէնե, էն դիեն կդառնա, կիգա ուր քավշընի մեջ, վըր աղբրի մը բազրկան կդնե։ Դոր մը կմնա, կըսե. «Հանիմ իմ ախչկներու դիարիք (նվեր) հազրիմ, գինամ, կիգան առեջսի, տամ զուրանց, թըխ խնտանանց։ Իմալ օր կբանա զհակուպեն, կիշկե օր թե՝ էրկու աղջկա դիարիք հանտա ի մեջ, պզտկին չկա. «Վուշ,— կըսե.— մոռցեր իմ, իմ պզտիկ աղջկա օխեշ չըմ բերերիմ»։

Նակաստան աղբրի միջեն մեկ սև Արապ մը կթռնա, առեջ կանի.— Հա,— կըսե,— աղա ջան, հ՞որի՞ վուշ էրիր։

— Ըսկի, զիմ ախչկա օխեշ մոռցեր ենք, վուշ էրի։

— Օխեշ մըտ մդի կա, կանի իմ աղից հարցում ու գամ։

Արապ կսրկի ի շրի տակ, բազրկան-բաշին կմնա վըր աղբրին նստուկ։ Արապի աղի անուն լէ Օխեշ կէղնի, ներս կմտնա, բարև կբռնա, կանի.

— Հա,— կըսե աղեն,— Ո՞որի՞ կանար։

— Ըսկի,— կըսե,— մեկ բազրկան-բաշիմը էկե, թալե վըր մեր աղբրին, օխեշ կուզե ուր ախչկա համար։

— Գնա ըսե, թըխ զուր ախչիկ ճամխե, իգա Ո՞ուտա։

Արապ թռավ, էլավ դուս, ըսեց.— Բազրկան-բաշի, գնա քու ախչիկ ըի իտա տեղ, ես թարզի եմ, կտրիմ, կարիմ, հագցում, ճամբըցում։

Հ՞ոցկի բազրկան-բաշին բարձավ, գեղին օր մոտեցավ՝ ախչըկտիք էկան առեջ, խնտացան, փաթվան պապու վզով։ Պապն էր, հանեց զէն էրկու աղջկա գիարեք, տվեց, պզտի աղջիկ պազբերնավ, իշեց քուրվըտոց ձեռ։

— Լաո, քզի լէ տեղ կա, գու քու նիաթ Ո՞որի՞ կկախիս,— ըսեց պապ։

Բազրկան-բաշին էր, էկավ զուր բեռներ թափեց, ինչ կերչկեր տեղավորցուց։

Լուսմթի խանչեց զախչիկ, ըսեց.— Լաո՛, կառնիս զքու ջառեք, կէրթաս ի ֆլան աղբուր, օր հասար վըր աղբրին, ջուր խմե, էրե՝ «Վո՛ւշ». արապ մը կթռնա, քու առեջ կանի։ Ջըվախենա՞ս, էնի թարզի է, կկտրե վըր քու բաժին, կկարե, հագի, արի։

Աղջիկ էլավ, առավ զուր ջառեք, խոնչով ու բոխչով, գնաց մըտ Արապ։

Հասան վըր աղբրին, ախչիկ ջուր խմեց, էրեց՝ «Վուշ»։ Հըտ գահուն Արապ թռավ, առեջ կանավ.— Հա՛— ըսեց, էկա՞ր, ախչի, դ՞արի վըր իմ ձեռաց օր զքու բաժ չափիմ, կտրիմ, կարիմ, զքու օխեշ։ Ախչիկ թռավ վըր Արապի ձեռաց, Արապ, դու Արապ էղնիս, ձեռ մը դրեց ախչկա գլխուն, մեկ օտներու տակ, առավ ու սկավ ի ջրի ներքև։

Ախչիկ իշեց օր դարկե մը բացվավ, Արապ առավ զինք ու մտավ ի ներս, տեսավ օր մեկ թրընտազ ջեհել մը էտ տեղ նըստուկ է։

— Հան,— ըսեց,— ախչի, քզի Օխեշ, զքզի բերի զիմ աղի համար։

Էտ տեղ աղեն ու ախչիկ առան զիրար։

Ջառեք հարի իրիկվան նստան, տեսան օր ախչիկ չիկա, էլան գացին։ Պապն ու մամ իմցան, տփին վըր ուրանաց չոքերուն, էլ ի՞նչ պտի էնեն, բան բանից ընցեր էր։ Լուսմթի ախչկա մամն էլավ, խոնչով, բոխչով գնաց, վըր աղբրին նստավ, էրեց՝ «Վո՛ւշ»։ Արապ թռավ, առեջ կանավ.— Հա՛,— ըսեց,— ի՞նչ կուզիս։

— Կուզիմ— ըսեց,— օր զիս տանիս մըտ իմ ախչիկ։

— Դ՝արի վըր իմ ձեռաց։

Արապ առավ կնիկ ու մտավ ի ջրի տակ։ Կնիկ իշեց օր մեկ թագավորական որդի մը, հանտե առե զուր ախչիկ, նստեր է։

Էլան ախչիկն ու փեսեն կանան, բերին զկնիկ նստըցուցին մըջ ուրանց։

Շաբաթ մ՝էրկուս մեջ հ՝ընցավ, կնիկն ըսեց փեսին.— Հյուր կէնիմ քզնե, օր զիմ ախչիկ տաս, տանիմ մեկ ժուկ մը մըտ մզի, ու էլմը բերիմ։

Փեսեն իզին տվեց, մամ առավ զախչիկն օր էրթեր, փեսեն գոզտու խանչեց զախչիկ, թամպա էրեց, ըսեց.

— Տե՛ս, կէրթաս քու պապու տուն, չէղնի մարդու խեչ պարկիս, գնա՛ քու օդեն նստի, ես հ՝ըմնօր իրկնեց կիգամ։

Մամն էր. էլավ առավ ախչիկ, նստան վըր Արապի թևերուն, էլան դուս։ Գացին հասան տուն, տնեցիք թափան վրե ուրանց, խնտացան։ Իրկուն էղավ, ախչիկ գնաց, մինակ զուր հ՝օդեն պարկավ, կես գիշեր էղավ-չէղավ, խրժալին մեկ հավքորենք մի օդի երդկեն իջավ ցած։ Ախչիկ էլավ ճրագ վառեց, իշեց օր ուր իրիկն է։ Իրիկն էր, հանեց զուր, զհավորքու հալավ, էղավ մեկ հուրնիկ-հրեղեն մը, նստան զրուցին, լուսու դեմ իրիկ էլմը հագավ զուր հավորքու հալավ, թռավ գնաց։

Օր մը չէ, էրկու չէ, ջոշ քուր սրդի վրա դնաց կանավ փողան, հարի կես գիշեր պահնորդ էղավ, իշեց օր նակաստան խրժալին հավորենք մը երդկեն իջավ տեսավ օր ուր քուր ճրագ զարկեց, վառեց, էդ հավորենք լէ հրտ իջնելուն հանեց զուր հավորքու հալավ, էղավ մեկ տրսնուհինգ տարեկան ջահել մը, որ չուտիս, չխմիս, կանիս թամաշա էնիս, նստան ու բաշլեցին կեր ու խում։ Ջոջ քուր էդ տեղ բախլավ ըսեց. «Դու կանի, էտի իմ պզտի քուրն էղնի, իտա փառքին տիրանա, ես մնամ խե՞ղճ»։ Խոճա լուսմթի էլավ, գնաց մըտ դարբին, տվեց էրկթե չանկլներով երդսկալ մը շինել, վրեն հ՝ըմեն սանդերքե ակռա, բերեց ու դրեց վըր քուրոջ հ՝օդի երդսին։

Կես գիշեր էղավ-չէղավ, հավորենք էլ մը խրժալին էկավ, օր զինք թալեր հ՝օդի երդսեն, ասրռվավ չանկլներուն, չանկլներ չըքվան ըտոր սիրտ ու սրտներ, էտ տեղ թապլտավ, թապլտավ, անճախ զինք փրծուց ու գնաց յարալի-փարալի պատավ վըր ուր տեխաց։

Ախչիկն էր, լուսմթի էլավ, գնաց երդսի թարաֆ, իշկեց օր մեկ էրկթե ճաղերով երդսկալ մը հանտե վըր երդսին ու արուն գոլ

բոնե կանե։ Տփեց վրը գլխուն, տվեց չոքերուն, առավ զերդսկալն ու տարավ, թալեց պապու առեջ.— Ասու զալրմներ.— ըսեց,— ես ձզի ի՞նչ ենք էրե, օր դու իտա բան էրեցիք իմ գլոխ, ի՞նչ կէղներ օր ձեր փեսեն էր, գախտան բիր մի (երբեմն) կիգեր, զիս տեսներ, էրթեր։

Էլավ ախչիկ լալով բոռաց, անիծեց ղըտոնց ու ընկավ ճամբախ, գնաց։ Գնաց վըր աղբրին նստավ, ջուր մը խմեց, էրեց՝ «Վուշ». Արապ թռավ էլավ։

— Հա, ի՞նչ կսիս, խանմ։

— Ի՞նչ ըսիմ, զիս տար մըտ իմ իրիկ։

— Կանի,— ըսեց,— էրթամ հարցում։

Արապ սըկավ ջրի տակ, գնաց աղին հարցուց, աղեն ըսեց.

— Կէրթաս, զէն բեբախտ կառնիս վըր քու էրկու ձեռաց, կը փչիս օր էրթա պատի յոթ ծովու կղզին։

Արապ էլավ, առավ զախչիկ վըր ուր ձեռներուն, փչեց, գնաց էդ զավալին յոթ ծովու կղզին ընկավ։

Ախչիկ աչք բացեց, իշեց, օր չորս բոլոր կմթնե. լաց ու գոռաց ու օլրտավ, ետև միամտավ ու խըլմաշ (ոչ քուն, ոչ արթուն) էղավ, էկավ պտրտավ։ Աստվածուտեն էրկու հրեշտակ էրեց էղվընեկ, ճամբեց վըր ըտոր։ Էղվընեկներ էկան, կանան վըր ըտոր գլխուն ու խըսա էրին։

— Իտա զավալին բանէ խապար չուներ, ու իտա օղյաթ գլոխ էկավ, էտի օր թ'արթուն էղնի, մըր խոսքեր լսե, մենք հտնտե էրկու փեստուր կը թալինք հ'ուտա։ Ասու հրամանքով զէն փեստուրներ կապե ուր ոտներու տակ, ելնա վըր ծովուն, քելե ինչ որ չոր գետին։

Ախչիկ աչքեր բացեց, էլմը քնավ, էղվընեկներ էլմը զրուցին։

— Իտա կղզու մեջ մեկ ջատուքար պառավ մը կա, հանտե ծառի տակ պարկուկ է, իտա ախչիկ թըխ ըսկի չըվախենա, էնի յոթն օր ու յոթն գիշեր կքնի, գունա մը լէ արճիճ թալե բերան, էրե ինչ օր ձութ ու կծամե, ծծեր թալե վըր թևերուն, ամեկ խընց օշխրի դմակ, էրթա զընտոր ծծեն կտրե, սըղկե, էնե ինչղոր բուռնութի, տանե թալե վըր ուր իրկա բրներուն, ասու հրամանքով կսաղնա։

Ախչիկն էր, քնուց իմացավ, վերուց զթեպուրներ, գնաց մըջ կղզուն օլրտավ, զպառավ գտավ, տեսավ օր քնուկ էր, գողտու մոտեցավ, ծծեն կտրեց, տարավ սըղկեց, էրեց ինչոր բուռնութի, դըրեց ի ջեպ, ըստապուն էկավ, կապեց զթեպրներ օտաց տակ, զծովն ընցավ էլավ ի ափ։

Շատ ու քիչ գնաց, աստված գինա, գնաց հասավ մեկ հովվի մը, զուր հալավ տվեց հովվին, առավ զհովվի հալավ, հագավ, քոլող դրեց գլուխ, զապեն առավ թևերուն ու տվեց զճամբան առեջ։ Գնաց, մոտեցավ զուրանց քավշներուն, հագավ դավրեշնակ հալավ, փոստ առավ վրը փիճերուն, քյաշքուլ առավ ի ձեռ, ծամեր թորկեց վրը միջաց, թաճ դրեց ի գլուխ ու թեմ էրեց աղբուրն ու գնաց։ Գնաց հասավ աղբուր, ջուր խմեց, էրեց՝ «Վուշ»։ Արապ թըռավ, կանավ առեջ։

— Հա, դավրեշ բաբա, ի՞նչ կուզես։

— Ըսկի,— ըսեց,— հեքիմ իմ, կօլորտիմ ընծի։

— Իմ աղեն բրինտար է, չըս կը՞ռնա սաղցու։

— Քառսուն ավուր բրինտար էղնի, հավալ աստված, իրեք ավուր մեջ կսաղցում։

— Օր հըմալ է, դավրեշ բաբա, կանի էդ տեղ, ես իմ աղից հարցում, գամ։

Արապ մտավ ներս, ջուապ տարավ աղին, աղեն ըսեց.

— Լաո, իմ մացեր է դահոց դահ, ընձի հեքիմ էլ ի՞նչ պտի էնե։

— Աղա,— ըսեց Արապ,— բալքի աստվածուտեն է ճամբե, դու հո՛րի՞ ինատ կէնիս։

— Դը՛ գնա, դը գնա, բի՛,— ըսեց։

Արապ էլավ, դուս, առավ զդավրեշ վրը ձեռաց, մտավ ի ներս։

Հըտ մըտնելուն դավրեշ բաբեն պղինձ մը ջուր տաքցուց, տրկլոզցուց էդ բրինտար, իմալ օր էկեր էր, զըտոր արըներ վրը ուրին չորցեր ու մացեր էր, էտ տեղ Արապ ջուր լցեց ու էտի սերսուփ մը զէդ ըրներ լվաց ու ճմռեց, հիմալ լվաց օր զըտոր ջան էրեց ապըրշում. ըստապուն բերեց զէն ծիծն օր փչրեր էր, լցեց զըտոր ըրներու մեջ, խորոտ մի փաթեց ու պարկըցուց։ Թամամ եռսուն ու ին օր բրիներու մոմուռից ըտոր աչքեր չը կպեր էր, գահոց գահ քնավ, իմցավ ջուր հազը էր, էլմը լողկըցուց, դեղեց, պարկավ, իրեք օրն օր թմավ, վրը իրեք ավուր իմցավ օր էղեր էր մորե մեկ։

— Դը, դավրեշ բաբա, ուզե, որ դունյաքիլի մալ տամ քզի։

Ըսեց. —Ընծի քու մալ պետք չէ, հարամ է կեցե, կանի քզի էրկու խըսա էնիմ, նոր իմ վիզ զարկիս դու դինաս, չզարկիս, դու գինաս։

Ախչիկ ինչ օր ուր գլխու գալիքներն են, ըրմեն մեկ մեկ խըսա էրեց։ Իրիկ նոր իմցավ վրը ուր, էլավ փաթթվավ կնկա վզովը։

— Ես մեղա ասու,— ըսեց,— սուճն իմն էր, ես քու հետ բեբախտուտեն էրեցի։

Նոր էլավ ախչիկ զուր դավրեշնակ հալվներ հանեց, հագավ նոր հարսի շորեր, զերոներ լվաց, անուշ հոտեց զինք, զաշքեր դեղեց, ապրոճքներ էցկեց ձեռներ, գուլընկներ թորկեց վրը թշերուն, շարան օսկիք շերկեց վրը ճակտին, ծամեր մանտր մանտր հ'ուստրկեց, էլ էղավ օր ինչ-օր լուսնակ տրսնուհնգե, էկավ կանավ իրկա առջ։

Իրիկն օր տեսավ զկնիկ, մաշուղ էղավ, թաժա առան զիրար, նստան ու վելեցին։